

Pub#F127.10 Armenian – March, 2020

Մտավոր հետամնացություն և զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց իրավունքները

Կորոնավիրուս (COVID-19) Մտավոր հետամնացություն և զարգացման խանգարումներ ունեցող մարդկանց իրավունքները, որոնք ապրում են առանձին կամ ընտանիքի հետ

*\*Այս էջը կրթարմացվի լրացուցիչ տեղեկատվության առկայության դեպքում*

Թարմացվել է՝ 23-ը մարտի, 2020թ.

Այս տեղեկատվությունը նախատեսված է մտավոր հետամնացություն և զարգացման խանգարումներ ունեցող այն մարդկանց համար, որոնք ապրում են առանձին կամ ընտանիքի հետ և ստանում են ծառայություններ «տարածաշրջանային կենտրոններից»:

**Ի՞նչ են իրենցից ներկայացնում տարածաշրջանային կենտրոնները**

Տարածաշրջանային կենտրոնը ծառայություններ և աջակցություն ստանալու ձեր հիմնական սպասարկման կենտրոնն է: Տարածաշրջանային կենտրոնների կոնտակտային տվյալները կարող եք գտնել այս հղումով՝

<https://www.dds.ca.gov/rc/listings/>

**Ինչպե՞ս կարող են օգնել տարածաշրջանային կենտրոնները՝ պատրաստվել COVID-19 վարակին**

Այժմ ճիշտ ժամանակն է պատրաստվել արտակարգ իրավիճակներին, ինչպիսին COVID-19 վարակն է: Կապվեք տարածաշրջանային կենտրոնի ձեր ծառայության համակարգողի հետ: Խնդրեք նրան օգնել ձեզ կազմել պլան այն դեպքերի համար, երբ ձեր խնամատուներն այլևս չեն կարողանա օգնել ձեզ COVID-19 վարակի պատճառով: Կարող եք հարցնել, թե ինչ է տեղի ունենալու, եթե որևէ ցերեկային ծրագրում խնամք եք ստանում, և ձեզ հայտնել են, որ այն պետք է փակվի:

## **IHSS և այլ խնամատուներ. Ի՞նչ պլան պետք է ունենամ, և ի՞նչ կարող եմ անել տարածաշրջանային կենտրոնը**

Եթե ձեր հիմնական խնամքն իրականացվում է IHSS-ի կամ տարածաշրջանային կենտրոնի կողմից չվճարվող ծրագրերի այլ խնամատուներ կողմից, խնդրեք ձեր խնամատուներին օգնել ձեզ պլան կազմել, եթե նրանք այլևս չեն կարող օգնել ձեզ:

Կարող եք դիմել նաև տարածաշրջանային կենտրոնի ձեր ծառայության համակարգողին՝ օգնել ձեզ պլան կազմելու հարցում: Տարածաշրջանային կենտրոնը կարող է վճարել տարբեր ծառայությունների համար, եթե ձեր IHSS խնամատուն այլևս չկարողանա օգտակար լինել: Այդ ծառայություններն են.

- Անձնական խնամատուի կամ տնային գործեր կատարողի ծառայություններ՝ այս ծառայությունները մեծ մասամբ նման են IHSS ծառայություններին: Դրանց համար վճարում են ոչ թե վարչաշրջանները, այլ տարածաշրջանային կենտրոնները:
- Հանգիստ՝ այս ծառայությունն օգնում է ձեր խնամատուներին աջակցել ձեզ՝ համոզված լինելով, որ կարող են հանգիստ վերցնել:
- Ինքնուրույն կյանք վարելու հմտություններ կամ կենսակերպի աջակցման ծառայություններ՝ այս ծառայություններն օգնում են մարդկանց վարել հնարավորինս անկախ կեսակերպ իրենց սեփական տանը՝ ունենալով իրենց կարիքի համար անհրաժեշտ աջակցությունը:

Ձեր տարածաշրջանային կենտրոնից տեղեկացեք այս և այլ հնարավոր տարբերակների մասին: Այս ծառայություններից շատերը կարող են տրամադրվել ձեզ հետ բնակվող ընտանիքի անդամների կամ սենյակակիցների կողմից:

## **Ո՞րն է զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության նահանգային վարչության դերը**

Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության նահանգային վարչությունը բոլոր 21 տարածաշրջանային կենտրոնների համար պատասխանատու նահանգային մարմինն է: Այս գործակալությունը երբեմն կրճատ անվանում են DDS:

DDS-ի լիազորությունների մեջ մտնում է ասել տարածաշրջանային կենտրոններին՝ ինչ անել: COVID-19 վարակի պայմաններում DDS-ը տարածաշրջանային կենտրոններին հրահանգել է՝ ապահովել տարածաշրջանային կենտրոնի ծառայություններն ստացող մարդկանց առողջության պահպանումը և անվտանգությունը: Օրինակ՝

- DDS-ը տարածաշրջանային կենտրոններին ասել է, որ նորմալ է մարդկանց հետ ֆիզիկապես չհանդիպելը: Փոխարենը՝ տարածաշրջանային կենտրոնները կարող են օգտագործել տեխնոլոգիաներ, օրինակ՝ հեռախոսներ, տեսակոնֆերանսներ, Skype և FaceTime: Կարող եք ձեր տարածաշրջանային կենտրոնի հետ խոսել այդ տարբերակների և դրանցից օգտվելու ձևերի մասին:
- DDS-ը տարածաշրջանային կենտրոններին լիազորություն է տվել բարձրացնել խնամատուների վճարումը՝ COVID-19 վարակի պայմաններում մարդկանց առողջության պահպանումը և անվտանգությունն ապահովելու համար: Դա կոչվում է «Ազատում առողջության պահպանման և անվտանգության ապահովման հրաժարումից»: Հարցրեք ձեր տարածաշրջանային կենտրոնին, թե արդյո՞ք դա ձեզ համար հարմար տարբերակ է:

## Ի՞նչպես կարող եմ մանրամասն տեղեկանալ իմ իրավունքների մասին

Եթե ունեք հարց ձեր օրինական իրավունքների մասին կամ այն մասին, թե արդյոք տարածաշրջանային կենտրոնը չի օգնում ձեզ պատրաստվել COVID-19 վարակին.

- Զանգահարեք DRC-ի ընդունարան հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-776-5746:
- Զանգահարեք DRC-ի Շահառուների իրավունքների պաշտպանության գրասենյակ (անգլ.՝ Clients' Rights Advocacy, OCRA) հետևյալ հեռախոսահամարներով՝
  - Հյուսիսային Կալիֆորնիա՝ 1-800-390-7032 (հեռատիպ՝ 877-669-6023)
  - Հարավային Կալիֆորնիա՝ 1-866-833-6712 (հեռատիպ՝ 877-669-6023):